

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ

ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍԻ

06-րդ դեկտեմբերի 2016թ.

Ք. Իջևան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2016 թվականի դեկտեմբերի 6-ին Ժ.11⁰⁰-ին կայացած

ՀՀ Տավուշի մարզխորհրդի նիստի

1. Ս/թ սեպտեմբերի 18-ին մարզի 36 համայնքներում կայացած ՏԻՄ ընտրությունների արդյունքների ամփոփում

/զեկ. Մ.Մխիթարյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ/

2. 2017-2025թթ. Տավուշի մարզի զարգացման ռազմավարության մշակման աշխատանքների ընթացքի մասին

/զեկ. Գ.Հարությունյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի վարիչ/

3. Մարզի համայնքների 11 ամսվա սեփական եկամուտների կատարողականի մասին

/զեկ. Ռ.Ներսեսյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ/

4. 2016թ. Գյուղատնտեսական աշխատանքների ամփոփում /աշնանացան, 2012-2015թթ. տրամադրված աշնանացան ցորենի սերմացուի գումարների հավաքագրման, 2017թ. դիզվառելիքի, պարարտանյութի, սերմացուի պահանջարկի վերաբերյալ/

/զեկ. Վ.Սուքոյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ/

5. Առողջության առաջնային պահպանման օղակում որակական ցուցանիշների վերլուծություն և ամփոփում

/զեկ. Լ.Վանցյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ/

6. Այլ հարցեր

06.12.2016թ.

ք.Իջևան

Նիստը վարում էր ՀՀ Տավուշի մարզպետ Հ.Աբովյանը.

Մարզխորհրդի 41 անդամներից ներկա էին 36-ը:

Նիստին ներկա էին ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալները, մարզպետարանի աշխատակազմի ղեկավարը, մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետեր, բաժինների վարիչներ, պատասխանատու աշխատողներ:

1. Ս/թ սեպտեմբերի 18-ին մարզի 36 համայնքներում կայացած ՏԻՄ ընտրությունների արդյունքների ամփոփում

/զեկ. Մ.Մխիթարյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և

ՀԳՄ հարցերով վարչության պետ/

Զեկուցողը ներկայացրեց, որ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության 2016թ. մայիսի 25-ի Ընտրական օրենսգրքի 144-րդ հոդվածի 3-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետի պահանջներով, ՀՀ Տավուշի մարզպետի 06 հուլիսի 2016 թ. թիվ 94-Ա որոշմամբ ՀՀ Տավուշի մարզի ՏԻՄ հերթական ընտրությունները նշանակվել են 2016թ. սեպտեմբերի 18-ին:

2016թ. հունիսի 17-ի „Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին,, օրենքով մարզի Նոյեմբերյանի տարածաշրջանի համայնքները միավորվել են և դարձել 3 համայնք՝

1. Նոյեմբերյան համայնք, որի մեջ ընդգրկվել են Նոյեմբերյան քաղաքային և Բաղանիս, Բարեկամավան, Բերդավան, Դովեղ, Կոթի, Ոսկեպար, Ոսկեվան, Ջուջևան գյուղական համայնքները:
2. Այրում համայնք, որի մեջ ընդգրկվել են Այրում քաղաքային և Արճիս, Բագրատաշեն, Դեբեդավան, Դեղձավան, Լճկաձոր, Հաղթանակ, Պտղավան գյուղական համայնքները:

3. Կողբ համայնք, որի մեջ ընդգրկվել են Կողբ և Զորական գյուղական համայնքները:

Ինչպես վերը նշված, այնպես էլ Ազատամուտ, Աճարկուտ, Բերքաբեր, Գանձաքար, Լուսաձոր, Դիտավան, Սևքար, Կիրանց, Վազաշեն, Այգեպար, Այգեձոր, Արծվաբերդ, Տավուշ, Իձաքար, Վերին Ծաղկավան, Ներքին Կարմիրաղբյուր, Մովսես, Նավուր, Նորաշեն, Չինչին, Չինարի, համայնքներում տեղի են ունեցել համայնքի ղեկավարի և ավագանու, Այգեհովիտ, Ենոքավան, Գետահովիտ, Բերդ, Վերին Կարմիրաղբյուր, Չորաթան, Պատավաքար համայնքներում՝ համայնքի ղեկավարի, իսկ Աչաջուր, Ակնաղբյուր, Լուսահովիտ, Ներքին Ծաղկավան, Վարագավան համայնքներում՝ ավագանու հերթական ընտրություններ:

Համաձայն ՀՀ ԿԸՀ կողմից սահմանված ժամանակացույցի բոլոր համայնքներում կազմավորվել են ընտրական տեղամասերը, գրանցվել են համայնքների ղեկավարների և ավագանիների անդամների թեկնածուները, որոշվել են քարոզչական պաստառներ փակցնելու համար անվճար տեղերը, ձևավորվել են տեղամասային ընտրական հանձնաժողովները, սահմանված ժամկետում հրավիրվել են ՏԸՀ -ների առաջին նիստերը, ընտրատեղամասերում փակցվել են ընտրողների նախնական և վերջնական ցուցակները:

Համայնքի ղեկավարի թեկնածուներ են գրանցվել 67 անձինք, որոնցից 2 կին:

Առաջադրված թեկնածուներից 42-ը ՀՀԿ, 3-ը ՀՅԴ, 1-ը ԲՀԿ, 2-ը Հայկական Վերածնունդ, 1-ը Լուսավոր Հայաստան, 1-ը ԱԻՄ կուսակցությունների անդամներ են, իսկ 17-ը՝ անկուսակցական:

Ավագանու թեկնածուներ են գրանցվել 302 անձինք, որոնցից 47 կին:

Նրանցից 60-ը ներկայացրել են ՀՀԿ-ն, 17-ը՝ ՀՅԴ-ն, 7-ը՝ ԲՀԿ-ն, 7-ը՝ Հայկական Վերածնունդը, 6-ը՝ Լուսավոր Հայաստանը, 1-ական՝ Հանրապետություն և Հզոր Հայրենիք կուսակցությունները, իսկ 203-ը՝ անկուսակցական:

Հաշվառված 69585 ընտրողներից ընտրություններին մասնակցել են 41291-ը /59,3%/:

Ավագանու անդամության 302 թեկնածուներից ընտրվել են առավելագույն քվեներ ստացած 193 հոգի, որից 22-ը՝ կին: Նրանցից 36-ը ՀՀԿ անդամներ են, 17-ը՝ ՀՅԴ, 7-ը՝ ԲՀԿ, իսկ 134-ը՝ անկուսակցական:

Համայնքի ղեկավարի ընտրություն իրականացրած 28 համայնքներից 10-ում ընտրվել են նոր համայնքապետեր՝ Նոյեմբերյան, Կողբ, Այրում, Գանձաքար, Լուսաձոր, Աճարկուտ, Կիրանց, Արծվաբերդ, Մովսես, Վերին Ծաղկավան: Նրանցից 5-ը ՀՀԿ անդամներ են, 1-ը՝ ՀՅԴ, իսկ 4-ը՝ անկուսակցական:

Կարող ենք փաստել, որ մարզում ՏԻՄ ընտրություններն անցել են կազմակերպված, Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան: Դրա մասին է խոսում նաև այն հանգամանքը, որ թե դիտորդների, թե վստահված անձանց կողմից տեղամասին հանձնաժողովների աշխատանքի վերաբերյալ էական խախտումներ չեն արձանագրվել: Եղել են քիչ թվով անճշտություններ, որոնք վերջնական արդյունքների վրա որևէ ազդեցություն չէին կարող գործել:

Ձեկույցն ընդունվեց ի գիտություն:

2. 2017-2025թթ. Տավուշի մարզի զարգացման ռազմավարության մշակման աշխատանքների ընթացքի մասին

/զեկ. Գ. Հարությունյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի զարգացման

ծրագրերի և վերլուծության բաժնի վարիչ/

Ձեկուցողը ներկայացրեց, որ ՀՀ Կառավարության ներկայիս դիրքորոշումը տարածքային զարգացման վերաբերյալ ներկայացված է Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման հայեցակարգում, որն ընդունվել է ՀՀ Կառավարության կողմից 2011թ.-ի հունիսի 30-ի նիստի N 25 արձանագրության 38-րդ կետով հավանության արժանացած արձանագրային որոշմամբ: Տարածքային զարգացման հայեցակարգն ընդգրկում է համաձայնեցված և առաջնահերթություն հանդիսացող տարածքային զարգացումը, սահմանում կայուն տնտեսական զարգացման մոտեցումները՝ պահանջելով բոլոր մարզերից (վարչատարածքային միավորներից) ներկայացնել տարածքային զարգացման գործողությունների պլաններ: Տարածքային զարգացման հայեցակարգի հիմնական նպատակներն են տարածքային տնտեսությունների և գյուղերի բնակչության եկամտի աղբյուրների դիվերսիֆիկացիան, ձեռներեցության խթանումը, կենսապայմանների բարելավումն ու բարեկեցությունը, ինչպես նաև զբաղվածության մակարդակի բարձրացումը, որոնք պետք է իրականացվեն Հայաստանի տարածքային զարգացումն ապահովող ծրագրերի միջոցով: Մասնավորապես, տարածքային զարգացման հայեցակարգն ուղղված է տարածքների միջև զարգացման անհամաչափությունների հարթեցմանը և ազգային, մարզային ու տեղական իշխանությունների համար տեղերում կարողությունների ստեղծմանն ուղղված ծրագրերի իրականացմանը, միաժամանակ, հնարավորինս նվազեցնելով ծրագրերի անհարկի կրկնություններն ու համընկնումները, կատարված աշխատանքի որակի բարձրացմանը, մարզերում կայուն զարգացման ապահովմանը, որոշումների կայացման գործընթացների ապակենտրոնացմանը և համակցված մոտեցումների կիրառմանը տարածքային ու տեղական զարգացումներում: Հաշվի առնելով աշխատատեղերի ստեղծման կարճաժամկետ և երկարաժամկետ ներուժը, ինչպես նաև որակյալ տնտեսական աճի ապահովման ուղղությամբ արվող ներդրումները՝ ՀՀ-ի առաջնային ոլորտներն ու քաղաքականության ուղղություններն ընդգրկեցին՝ արդյունաբերության և արտահանման խթանումը, զբոսաշրջության զարգացումը, տեղեկատվական տեխնոլոգիաները, գյուղատնտեսության և գյուղական տարածքների զարգացումը և աջակցությունը ՓՄՁ-ներին ու սկսնակ ձեռնարկություններին: Յուրաքանչյուր մարզ կունենա զարգացման պլան, որում

կառանձնացվեն հիմնական համախառն ծախսային ուղղությունները, որոնց մեծ մասը կվերաբերվեն հանրային հատվածին, սոցիալական ապահովությանն ու բարեկեցությանը, իսկ առավել համեստ մասնաբաժինը՝ ՓՄՁ-ներին տրամադրվող աջակցությանն ու զբոսաշրջությանը: Այդ պլանները կմշակվեն մարզերի զարգացման խորհուրդների կողմից ու տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր ոլորտի և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ԲՀԿ) ներկայացուցիչների մասնակցությամբ:

Ելնելով վերոնշյալ մոտեցումներից սահմանվել է համապատասխան ժամանակացույց մարզի ռազմավարության մշակման նախապատրաստման և կազմման համար: Աշխատանքներն իրականացվելու են 5 փուլերով:

1. Ինստիտուցիոնալ կառույցների ձևավորման փուլ/մարզպետի համապատասխան որոշումներով աշխատանքային խմբերի և հանձնաժողովների ձևավորում, դասընթացների կազմակերպում/:
2. Վերլուծությունների փուլ, որը կավարտվի առաջիկա օրերին:
3. Ռազմավարության նպատակների սահմանման փուլ:
4. Ռազմավարության նախագծման փուլ, մինչև 2017թ. հունվարի վերջ:
5. ՏՁԴ մշակում և ամփոփում 2017թ. մարտ:

2016թ. հոկտեմբերին ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարի հանձնարարականով մեկնարկեց ՀՀ Տավուշի մարզի 2017-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարության կազմման գործընթացը: Վերոնշյալ գործառույթի իրականացման նպատակով ՀՀ Տավուշի մարզպետի կողմից ստեղծվել են համապատասխան աշխատանքային խմբեր:

ԵՄ-ի «Աջակցություն տարածքային զարգացման գործընթացներին» ծրագրի փորձագիտական խմբի կողմից կազմակերպվել է մարզային աշխատանքային խմբերի հետ հանդիպում՝ ՀՀ մարզերի 2017-2025թթ. զարգացման ռազմավարությունների մշակման գործնական քննարկումներ անցկացնելու նպատակով: Ռազմավարության մշակման հիմնական աշխատանքային խմբերի մասնակցությամբ. 2016թ. Նոյեմբերի 2-4-ը . իրականացվել է արտագնա սեմինար:

16.11.2016թ. Տավուշի մարզպետարանում մեկնարկել է քննարկումներ 2017-2025թ.թ. Տավուշի տարածքային զարգացման ռազմավարությունը մշակող ոլորտային խմբերի պատասխանատուների և շահագրգիռ կողմերի մասնակցությամբ, որոնք վարել է ՀՀ Տավուշի տարածքային զարգացման ռազմավարության մշակումը համակարգող՝ մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը: Քննարկումները վերաբերել են բնական պայմաններ և դեմոգրաֆիա, քաղաքաշինություն, տրանսպորտ, կապ և տեղեկատվություն և մյուս ոլորտներին: Քննարկումների ընթացքում կատարվել է իրավիճակի վերլուծություն, արվել դիտողություններ ու առաջարկություններ, որոնց վերաբերյալ տվել է համապատասխան հանձնարարականներ՝ սահմանված ժամկետում դրանք շտկելու և ներկայացնելու համար:

Նոյեմբերի 23-ին Տավուշի մարզպետարանում Տարածքային զարգացման ռազմավարության մեթոդաբանության համաձայն, ըստ ոլորտների ամփոփվեց ռազմավարության վերլուծական մասը: Ռազմավարության տիտղոսաթերթով սահմանված կետերի պատասխանատուները ներկայացրեցին մշակված փաստաթղթերը, որոնք վերջնական արդյունքներով ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն: Հաջորդ աշխատանքային սեմինարը նախատեսվում է 2016թ. դեկտեմբերի 7-9-ը, որի ժամանակ կվերանայվեն փորձագիտական խմբի կողմից արված բոլոր դիտողություններն ու առաջարկները, ինչպես նաև կիրականացվեն ՍՎՈՏ վերլուծություններ:

Բոլոր աշխատանքներն իրականացվում են համաձայն նախապես կազմված ժամանակացույցի :

Մարզի տարածքային զարգացման ռազմավարությանը զուգահեռ ՀՀ Կառավարության և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից ձեռնարկվել են համայնքների /այդ թվում խոշորոցված/ հնգամյա զարգացման ծրագրերի մշակման աշխատանքները: ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից

տրամադրված հնգամյա ծրագրերի մեթոդաբանությունը սահմանված կարգով տրամադրվել են համայնքներին:

Տեղեկացնում եմ, որ 17 համայնքներ ավարտել են մշակման աշխատանքները, 17 համայնքներում ընթացքի մեջ են կազմման աշխատանքները, իսկ 6 համայնքներ, որոնք աշխատում են քառամյա ծրագրերով սկսել են հնգամյա ծրագրի կազմման աշխատանքները:

Խնդրանքս համայնքի ղեկավարներին և խնդրում եմ Ձեզ պարոն Մարգարեա Ձեր հանձնարարականը համայնքապետերին՝ մեկ շաբաթյա ժամկետում աշխատանքներն ավարտել և ներկայացնել մարզպետարան:

Տեղեկացնում եմ նաև, որ մարզպետարանի ՏԻՄ և ՀԳՄ հարցերի վարչությունը, զարգացման ծրագրերի և վերլուծության բաժինը, ինչպես նաև մարզի զարգացման թիմը պատրաստ են լվելու և աջակցելու ծրագրերի կազմման աշխատանքներին:

Առաջարկվեց.

«Տավուշի մարզի համայնքների ղեկավարներին.

Մեկ շաբաթյա ժամկետում ավարտել հնգամյա ծրագրերի մշակման աշխատանքները և այն ներկայացնել մարզպետարան:

3. Մարզի համայնքների 11 ամսվա սեփական եկամուտների կատարողականի մասին

/զեկ. Ռ.Ներսեսյան - «Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ/

Չեկուցողը ներկայացրեց, որ 2016 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ մարզի համայնքների եկամուտների փաստացի մուտքը կազմել է 2904.7 մլն. դրամ, որը կազմում է տասնմեկ ամսվա նախատեսվածի 97.6 %-ը, իսկ սեփական եկամուտների հավաքագրումը կազմել է 603.4 մլն. դրամ կամ կատարվել է նախատեսվածի 87.7 %-ը:

Ըստ առանձին եկամտատեսակների սեփական եկամուտների կատարողականները ս/թ դեկտեմբերի 1-ի դրությամբ հետևյալն է.

- հողի հարկ - 11 ամսվա նախատեսված 159.4 մլն. դրամի դիմաց հավաքագրվել է 129.6 մլն. դրամ, կամ կատարվել է 81.3 %-ով:

Հողի հարկի մասով ամենացածր կատարողականներ ունեն հետևյալ համայնքները՝ Նորաշեն 20.6 %, Վ. Ծաղկավան 41.7 %, Այրում 43.4 %, Գանձաքար 47.1 %, Լուսահովիտ 53.2 %, Լուսածոր 53.4 %, Իճաքար 54.7 % և այլ համայնքներ (կցվում է ցածր կատարողականներ ունեցող համայնքների ցանկը),

- գույքահարկ - նախատեսված 255.9 մլն. դրամի դիմաց հավաքագրվել է 235.9 մլն. դրամ կամ կատարվել է 92.2 %-ով:

Ամենացածր կատարողականներն ունեն Լուսածոր 45.7 %, Այրում 54.3 %, Չինարի 58.4 %, Աճարկուտ 65.5 %, Նորաշեն 65.6 % համայնքները (կցվում է ցածր կատարողականներ ունեցող համայնքների ցանկը),

- տեղական տուրքեր - 11 ամսվա նախատեսված 34.1 մլն. դրամի դիմաց հավաքագրվել է 27.0 մլն. դրամ կամ կատարվել է 79.2 %-ով:

Ամենացածր կատարողականներն ունեն Վարագավան 28.4 %, Չորաթան 35.8 %, Վ. Կ. Աղբյուր 36.4 %, Կողբ 48.5 %, Նավուր 50.1 %, Դիտավան 54.3 % համայնքները: Հարկ է նշել, որ թվով 3 համայնքներ 11 ամսվա կտրվածքով ընդհանրապես գանձումներ չեն կատարել (կցվում է ցածր կատարողականներ ունեցող համայնքների ցանկը),

- գույքի վարձակալությունից եկամուտներ – 11 ամսվա նախատեսված 89.2 մլն. դրամի դիմաց հավաքագրվել է 67.5 մլն. դրամ կամ կատարվել է 75.7 %-ով:

Ամենացածր կատարողականներ ունեն հետևյալ համայնքները՝ Վ. Ծաղկավան 14.1%, Սևաքար 23.0 %, Իծաքար 31.2 %, Պառավաքար 33.5 %, Վարազավան 36.6 % և այլ համայնքներ (կցվում է ցանկը):

«Տավուշի մարզպետի համապատասխան գրությամբ ցածր կատարողական ունեցող համայնքների ղեկավարներին առաջարկվել է ամենօրյա հետևողական աշխատանքներ տանել և ձեռնարկել կտրուկ միջոցներ տեղական բյուջեով նախատեսված սեփական եկամուտները հավաքագրելու ուղղությամբ: Մինչև տարեվերջ քիչ ժամանակ է մնացել և անհրաժեշտ է որպեսզի համայնքների ղեկավարները ամենօրյա հետևողական աշխատանք իրականացնել բյուջեով նախատեսված եկամուտների հավաքագրման ուղղությամբ: Եկամուտների թերհավաքագրման արդյունքում ծախսերը նույնպես կթերակատարվեն, կառաջանան պարտքեր ինչպես նաև չեն լուծվի համայնքային նշանակություն ունեցող առաջնահերթ խնդիրներ:

«տարածքային կառավարման և զարգացման նախարարի 10.10.2016թ. թիվ 01/16.2/4175-16 հանձնարարականի կատարման նպատակով «Տավուշի մարզպետի 2016 թվականի հոկտեմբերի 14-ի գրությամբ Ձեզ էր տրամադրվել 2017 թվականի դոտացիայի նախնական թվերը և առաջարկվել էր մինչև 2016 թվականի դեկտեմբերի 1-ը ավագանիների կողմից հաստատված 2017 թվականի տեղական բյուջեները ներկայացնել մարզպետարան: Մինչ այժմ տեղական բյուջեն ներկայացրել են թվով 31 համայնք:

Համայնքների ղեկավարներին կրկին անգամ առաջարկվում է սեղմ ժամկետում մարզպետարան ներկայացնել 2017 թվականի հաստատված տեղական բյուջեները:

«Տավուշի մարզպետարանը պատրաստ է տեղական բյուջեների կազմման գործընթացում համայնքներին ցուցաբերել մեթոդական և խորհրդատվական օգնություն:

Ֆոնդային բյուջեի եկամուտները կազմել են 476.3 միլիոն դրամ, իսկ ծախսը կազմել է 312.3 միլիոն դրամ, որից 242.5 միլիոն դրամը շենքերի և շինությունների կառուցման և վերանորոգման համար, 69.8 միլիոն դրամը՝ տրանսպորտի և սարքավորումների ձեռք բերման համար:

Մարզի համայնքներում աշխատավարձերն ամբողջությամբ վճարված են, բացառությամբ Դիլիջան (8.0 մլն.դրամ) և Կողբ (2.8 մլն.դրամ) համայնքների (այս համայնքներում պարտքերն առաջացել են համայնքների խոշորացման արդյունքում աշխատանքից ազատված աշխատակիցների վերջնահաշվարկի հաշվարկի պատճառով):

Առաջարկվեց.

Մարզի համայնքների ղեկավարներին.

1. Ձեռնարկել միջոցառումներ 2016 թվականի տեղական բյուջեներով նախատեսված սեփական եկամուտների հավաքագրումն ապահովելու համար:
2. Սեփական եկամուտների ցածր կատարողական ունեցող համայնքների ղեկավարներին առաջարկել ամենօրյա աշխատանքներ տանել և կտրուկ միջոցներ ձեռնարկել տեղական բյուջեներով նախատեսված սեփական եկամուտների հավաքագրումն ապահովելու ուղղությամբ:

4. 2016թ. գյուղատնտեսական աշխատանքների ամփոփում /աշնանացան, 2012-2015թթ. տրամադրված աշնանացան ցորենի սերմացուի գումարների հավաքագրման, 2017թ. դիզվառելիքի, պարարտանյութի, սերմացուի պահանջարկի վերաբերյալ/

/զեկ.Վ.Սուքոյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ/

Զեկուցողը ներկայացրեց, որ մարզի գյուղատնտեսության նշանակության հողատեսքերը կազմում են 110762.8 հա,

որից՝	
վարելահող	-25588.4 հա
բազմամյա տնկարկներ –	1902.2 հա, որից՝
խաղողի այգիներ	-1198.1հա,
պտղատու այգիներ	-704.1 հա
խոտհարքներ	- 9401.3 հա
արոտավայրեր	- 63065.6 հա
այլ	- 10805.4 հա
Բացի վերը նշվածը տնամերձերում ևս կան	
բազմամյա տնկարկներ –	2030.8 հա ,որից՝
խաղողի այգիներ	-158.9հա,
պտղատու այգիներ	-1871.9 հա

25588.4 հա վարելահողից պատերազմական գործողությունների պատճառով չի մշակվում 7210.7 հա /կցվում է տեղեկանքը/: 18377.7 հա փաստացի վարելահողից 2016թ. ցանքի տակ է դրվել 16519 հա կամ 90 % /+101 հա նախորդ տարվա համեմատ/ կցվում է տեղեկատվությունը:

2015թ. մթերվել է 7854 տոննա խաղող, 1 կգ-ը 140 դրամով, այդ թվում՝
<<Երևանի կոնյակի գործարան>> ՓԲԸ Բերդի մասնաճյուղ – 5070 տոննա
<<Երևանի շամպայն գինիների գործարան>> ԲԲԸ Դեբեդավանի գինու գործարան-1215 տոննա /1 կգ-ը 120 դրամով/
<<Իջևանի գինու գործարան>> ԲԲԸ – 833 տոննա
<<Բերդավանի գինու գործարան>> ԲԲԸ - 506 տոննա
<<Էկոգարդեն>> ՍՊԸ – 230 տոննա:
Նախատեսվում է 2016թ.մթերել 5150 տոննա խաղող,որից.

<<Երևանի կոնյակի գործարան>> ՓԲԸ Բերդի մասնաճյուղ – 3000 տոննա
<<Երևանի շամպայն գինիների գործարան>> ԲԲԸ Դեբեդավանի գինու գործարան-1200 տոննա
<<Իջևանի գինու գործարան>> ԲԲԸ – 800 տոննա
<<Էկոգարդեն>> ՍՊԸ – 150 տոննա:

27.09.2016թ. դրությամբ մթերվել է շուրջ 1330 տոննա խաղող, որից՝

<<Երևանի կոնյակի գործարան>> ՓԲԸ Բերդի մասնաճյուղ – 1300 տոննա

<<Իջևանի գինու գործարան>> ԲԲԸ – 30 տոննա:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունվարի 29-ի թիվ 59-Ն, թիվ 73-Ն և փետրվարի 2-ի թիվ 74-Ն որոշումներով հաստատված պետական աջակցության ծրագրերի շրջանակներում մարզին հատկացվել է.

Գարնանացան գարու սերմացու -15 տոննա,

առվույտի սերմացու - 2 տոննա,

ազոտական պարարտանյութ - 420 տոննա, իրացվել է 386.8տոննա,

Ֆոսֆորական պարարտանյութ -5 տոննա/ վճարվել և իրացվել է 2.2 տոննա/,

կալիումական պարարտանյութ - 5 տոննա/ վճարվել և իրացվել է 2.45 տոննա./

դիզելային վառելանյութ - 400000 լիտր /27.09.2016թ. դրությամբ իրացվել է 301845 լիտր/:

Մոնիտորինգի արդյունքներով 2016թ. մարզի 18 համայնքների հատկացվել է 366 կգ <<Ռոդիֆակում Ս>> մկնասպան պատրաստուկ առավել վարակված 4575 հա-ի վրա պայքարի աշխատանքներ կատարելու համար:

Մարզի համայնքներում 2016թ. հունվարի 1-ի դրությամբ անցկացված անասնազվաքանակի հաշվառման արդյունքներով հաշվառվել է.

Անվանումը	2016	2015թ.	+/-
Խոշոր եղջերավոր	37624	37064	+560
այդ թվում՝ կովեր	17606	17504	+102
խոզեր	20069	16564	+3505
Ոչխարներ և այծեր	17508	16910	+598
Մեղվաընտանիքներ	21819	21757	+62
Թռչուններ	207698	211061	-3363

Կենդանիների ինֆեկցիոն հիվանդությունների նկատմամբ կայուն անասնահամաճարակային վիճակ ապահովելու, ինչպես նաև կենդանիների և մարդու համար ընդհանուր և վարակիչ /ինֆեկցիոն/ հիվանդությունները կանխելու նպատակով յուրաքանչյուր տարի իրականացվում են հակաանասնահամաճարակային կանխարգելիչ միջոցառումներ:

Ինչպես 2015թ., 2016թ. ևս պետպատվերի շրջանակներում կանխարգելիչ միջոցառումներ են իրականացվելու կենդանիների 11 հիվանդությունների դեմ:

<<Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության զարգացման>> ծրագրի շրջանակներում մարզում 2011թ.-ից իրականացվում է <<Արոտների կառավարման և անասնապահության զարգացման>> ծրագիրը:

Մինչև 2015թ. ծրագրում ընդգրկված 13 համայնքներում ստեղծվել են արոտագտագործողների սպառողական կոոպերատիվներ, որոնց կողմից ձեռք են բերվել համապատասխան գյուղմեքենաներ և գյուղգործիքներ, կատարվել են անասունների ջրարբիացման և սարամասերը իրար կապող ճանապարհների ջրահեռացման աշխատանքներ:

2015թ. ծրագրում ընդգրկվեցին և արոտագտագործողների սպառողական կոոպերատիվներ ստեղծվեցին ևս 12 համայնքներում /Վարազավան, Վ.Ծաղկավան, Տավուշ, Արծվաբերդ, Չինարի,

Մովսես, Իծաքար, Ն.Կ.Աղբյուր, Բերդ, Նորաշեն, Կոթի, Կողբ/, իսկ 2016թ.՝ Դիտավան համայնքում:

Նշված համայնքների արոտավայրեր և խոտհարքներ տանող ճանապարհների վրա կատարվել են փոսալցումներ, կառուցվել են խմոցներ:

Ընթացքի մեջ են կոոպերատիվների կողմից գյուղմեքենաների և գյուղգործիքների ձեռք բերման աշխատանքները:

Այժմ կազմակերպչական և նախապատրաստական աշխատանքներ են տարվում Դիլիջան համայնքի Աղավնավանք, Խաչարձան և Հովք բնակավայրերում ևս նման կոոպերատիվներ ստեղծելու ուղղությամբ:

Մարզում տոհմաբուծարաններ չկան, իսկ արհեստական սերմնավորման կայանը լուծարվել է: «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության զարգացման» ծրագրի շրջանակներում 2015թ. մարզի Բերդ համայնքում սկսվել և 2016թ. շահագործման է հանձնվել «Տավուշի մարզի անասնաբուժական կենտրոնը»: Կենտրոնը իրականացնելու է նաև կենդանիների արհեստական սերմնավորում:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի ծրագրի շրջանակներում Լուսաձոր համայնքի տարածքում կառուցված 150 գլխի անասնապահական համալիրում որպես տոհմային կորիզ բուծվում են Եվրոպայից ներկրված «Սիմենթալ», «Ջերսեյ» ցեղերի խոշոր եղջերավոր կենդանիներ, որոնց մատղաշները անասնապահական համալիրում կառուցված հորթանոցում պահվում են խմբակային կարգով: Որպես մայրացու էգ հորթերը տրամադրվել են Կիրանց, Նավուր, Արծվաբերդ/2015թ./, Գանձաքար/2015թ./, Գոշ/2015թ./ համայնքներում ստեղծված կոոպերատիվներին, որոնց ստացիոնար պահվածքը իրականացվում է «ՀիմնաՏավուշ» զարգացման հիմնադրամի կողմից կառուցված մինի-ֆերմաներում:

2016թ. ավարտվել են Կողբի մինի- ֆերմայի կառուցման աշխատանքները: Ստեղծված կոոպերատիվին, որը կազմված է 7 անդամից, մայիսին տրամադրվել են 15 գլուխ երինջներ:

Բարեկամավան համայնքում ևս մինի-ֆերմայի հիմնման աշխատանքները ավարտվել են 2016թ.: Հաշվի առնելով, որ համայնքը չունի բավարար անասնակերի և խոտի բազա ուստի 5 հոգուց բաղկացած կոոպերատիվին տրամադրվել է 23 մայրացու խոզ, 1 վարագ, 20 խոճկոր: Կոոպերատիվին տրամադրվել է նաև մոտ 5 տոննա կեր:

ՕՔՄՏԱՄ Հայաստանի կողմից Տավուշի մարզում իրականացված «Կայուն կենսապահովման» ծրագրի շրջանակներում Սևքար համայնքում 2013թ. ստեղծվել է սարնարանային տնտեսություն թարմ մրգի և բանջարեղենի պահպանման համար/250խմ/ և ջերմոցային համայնքային տնտեսություն՝ սոցիալական ձեռնարկություն/400քմ/, իսկ 2014թ՝ փոքր համայնքային վերամշակող գործարան: Այրում համայնքում 2014թ. հիմնվել է համայնքային վերամշակող գործարան՝ Այրումի «Միրգ» ՍՊԸ: Ջերմոցային համայնքային տնտեսություն՝ սոցիալական ձեռնարկություններ են ստեղծվել նաև Ակնաղբյուրում /3հատ ջերմոցներ՝ ընդհանուր 900քմ/, Ն.Ծաղկավանում /400քմ/, Հաղթանակում /500քմ/, Լճկաձորում /550քմ/, Աչաջրում /400քմ/, Սարիգյուղում/400քմ/, Հովքում /400քմ/, իսկ Պտղավանում, Կողբում, Գեփահովտում և Դիտավանում, Այգեհովիտում, Գոշում 400-ական քմ. ջերմատներ հիմնվել են 2015թ.:

Մարզի տարածքում «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾՎԿ» շրջանակներում/Հայկական միրգ/ 2014-2015թթ. հիմնվել է 22.3 հա պտղատու այգի /դեղձ, ընկույզ, նուռ, պիստակ, նեկտարիտին/:

Արճիտում

- 4.5 հա նեկտարիտինի, 8 հա կեռասի

- Պտղավանում - 3.8 հա ընկույզի
Դեբեդավանում - 4.1 հա սալորի, 1.9 հա դեղձի:

« կառավարության 02.07.2015թ.թիվ 766-Ն որոշմամբ մարզին հատկացված 28մլն. դրամով Նոյեմբերյանի տարածաշրջանի 6 համայնքներում /Արծիս-2 հատ, Լճկաձոր-1 հատ, Պտղավան-2 հատ, Հաղթանակ-2 հատ, Բերդավան-2 հատ, Կողբ-1 հատ/ տեղադրվել են 10 հատ հակակարկտային կայաններ:

2015թ. աշնանը մարզի սահմանամերձ Այգեհովիտ համայնքում ադրբեջանական կողմի հրետակոծությունների հետևանքով 22.6 հա խաղողի այգիների բերքը չհավաքած 46 խաղողագործներին « կառավարության կողմից որպես փոխհատուցում տրամադրվել է 16.1 մլն. դրամ, 28.04.2016թ. « կառավարության 426-Ն որոշմամբ Կոթի համայնքի բնակիչներին՝ 2015 թվականին իրականացված ոմբակոծությունների և ռազմական գործողությունների պատճառով գարու և ցորենի ցանքատարածություններում բերքահավաքի չիրականացման հետևանքով պատճառված վնասի դիմաց ցուցաբերվել է 8.935.5 մլն. դրամ /22 շահառու, 27.5 հա/: Նույն նպատակով « պաշտպանության նախարարության կողմից հատկացվել՝ ևս 3 մլն. դրամ:

Հանձնարարվեց.

« Տավուշի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Վ.Սուքոյանին.

1. Ձեռնարկել լրացուցիչ միջոցառումներ՝ 2012-2015թթ. հատկացված աշնանացան ցորենի սերմացուի գումարների հավաքագրման գործընթացն ավարտելու ուղղությամբ:
2. Ճշտել 2017թ. դիզվառելիքի, պարարտանյութի և սերմացուի պահանջարկը և ներկայացնել նախարարություն:

5. Առողջության առաջնային պահպանման օղակում որակական ցուցանիշների վերրվածություն և ամփոփում

/զեկ.Լ. Վանցյան – « Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ/

Ձեկուցողը ներկայացրեց, որ առողջության առաջնային պահպանման օղակ ասելով ենթադրում ենք այսպես կոչված պոլիկլինիկական ծառայության օղակը և շտապ օգնության ծառայությունները: Սա ինչ վերաբերվում է մեր քննարկվող հարցի օբեկտին: Իսկ վերլուծվող սուբեկտ են հանդիսանում առողջության առաջնային օղակի բժիշկները, ընդհանուր թերապևտները, ընտանեկան բժիշկները, մանկաբույժները, վիրաբույժները և մնացած բոլոր նեղ մասնագետները՝ ակնաբույժ, քիթ-կոկորդ-ականջաբան, ներզատաբան, սրտաբան, մաշկաբան, ինչպես նաև շտապ օգնության բժիշկները: Այժմ ևս կներկայացնեմնշված օղակների աշխատանքային գործունեության գնահատման ցուցանիշները և մեր եզրակացությունները:

Ընդհանրապես պոլիկլինիկական ծառայության բժիշկների աշխատանքը հիմնականում պարունակում է 3 բաղադրիչ՝

1. դիմող հիվանդների սպասարկում
2. ակտիվ այցեր հիվանդների տներ

3. ակտիվ այցերն են սպասարկվող բնակչության տներ

Այս առումով պատկերը հետևյալն է

*Իջևանի ԱԱՊԿ՝ սպասարկման ոլորտում ունի մոտ 18600 մարդ, որոնցից 5000-ը երեխաներ են: 2016թ-ի 1-ին կիսամյակում բժիշկների կողմից առձանագրվել է 23762 այց -սպասարկում:

*Դիլիջանի պոլիկլինիկա/ԻՌ-ՎԻՆԳ-ՍՊԸ/-սպասարկում է կցագրված 13846 մարդ, որից երեխաներ 3289, փոխայցերի թիվը՝ 19333

Նոյեմբերյանի պոլիկլինիկա-սպասարկման գոտում առկա է 5666 սպասարկվող բնակիչ, որից 1344-ը երեխաներ են, փոխայցերի թիվը՝ 2625:

Բերդի պոլիկլինիկա-սպասարկման գոտում առկա է 11301 սպասարկվող բնակիչ, որից 2248-ը երեխաներ են, փոխայցերի թիվը՝ 22400:

Շտապ օգնությունը նույնպես մտնում է առողջության առաջնային պահպանման օղակի մեջ:

Այստեղ պատկերը հետևյալն է՝

Իջևան-արձանագրվել է 1976 կանչ

Դիլիջան-1256 + 554 ամբուլատոր հիվանդ

Նոյեմբերյան-1265+2000 ամբուլատոր հիվանդ

Բերդ-1436 կանչ+1036 ամբուլատոր հիվանդ

Այսինքն կարելի է ասել, որ ընդհանուր առմամբ առողջության առաջնային պահպանման օղակում ազգաբնակչության բուժ.սպասարկման գործընթացը քանակային ցուցանիշներով չի տարբերվում նախորդ տարիների ցուցանիշներից և կարելի է համարել բավարար՝ Իջևանի ԱԱՊԿ-ում, Դիլիջանի <ԻՌ-ՎԻՆԳ>-ՍՊԸ-ում և <Բերդի ԲԿ>ՓԲԸ-ում և հակառակը՝ մտահոգիչ է <Նոյեմբերյանի ԲԿ-ում, որտեղ պոլիկլինիկական ծառայության թերի գործունեության հետևանքով ազգաբնակչության բուժ.սպասարկումը հիմնականում ընկած է շտապ օգնության ծառայության վրա, այսինքն, քանի որ շտապ օգնությունը կազմված է միջին օղակի բուժանձնակազմից, փաստորեն ազգաբնակչությունը չի ստանում լիարժեք բուժ.սպասարկում: Եվ դա իմ կարծիքով, արդյունք է ֆինանսական դժվարությունների, որոնք ծառայել են այսօր Նոյեմբերյանի ԲԿ-ի առջև /բժիշկները աշխատում են 0,5, 0,25 դրույքով և նույնիսկ 0,125 դրույքով/:

Մարզի բնակչության առողջության որակի բարձրացման նպատակով 2007թ-ից հանրապետության մի շարք մարզերում, այդ թվում և մեզ մոտ առողջապահության նախարարության կողմից ներ է դրվել սկրինինգային ծրագիր, որը տարեցտարի ընդլայնվել է և վերահսկվում և ֆինանսավորվում է համաշխարհային բանկի կողմից: Այս սկրինինգ ծրագրի իմաստը կայանում է հետևյալում՝ պոլիկլինիկա այցելած բոլոր քաղաքացիները անկախ տարիքային խմբից առանց լրացուցիչ վճարի ենթարկվում են հետազոտության մի շարք տարածված հիվանդությունների նկատմամբ, ինչպես օրինակ՝ զարկերակային գերճնշում, շաքարային դիաբետ, քաշի խանգարումներ, արյան ընդհանուր խոլեստերինի մակարդակի որոշում, կրծքագեղջի քաղցկեղի առկայություն, մի շարք մանկական հիվանդագին վիճակների վաղ իայտնաբերման վերաբերյալ և այլն:

Այդ հետազոտությունների անցկացման պարտականությունը դրված է պոլիկլինիկական ծառայության վրա և նշված աշխատանքները կատարող բժիշկները ստանում են դրա դիմաց լրացուցիչ, այսպես կոչված բոնուսային վարձատրություն:

Նշված աշխատանքները ունեն արտակարգ նշանակություն ազգաբնակչության առողջության առաջնային պահպանման գործում: Նշված գործընթացները բնութագրող ցուցանիշները նույնպես հանդիսանում են լուրջ որակական ցուցանիշ մեր բուժաշխատողների գործունեության գնահատման առումով:

Սկրինինգային գործընթացի վերլուծությունը ցույց է տալիս, որ մեր մարզի բուժհաստատությունների մեջ ունենք և պատասխանատու և անպատասխանատու հիմնարկներ՝

Շատ վատ է ցուցանիշները այգեծորի ԲԱ-ում, Կոթիի ԲԱ-ում, <ԻՌ-ՎԻՆԳ> ՍՊԸ-ում, Մոլմեսի ԱԱՊԿ-ում, և հակառակը՝ գոհացուցիչ պատկեր էարձանագրվում կատարված աշխատանքներում՝ Կողբում, Նոյեմբերյանում, գերագանց է Արծվաբերդում, Գանձաքարում, Բերդավանում, Ոսկեվանում, Բագրատաշենում: Սկրինինգային ծրագրերի վերլուծության արդյունքում ՀՀ ԱՆ կողմից կառավարությանն են ներկայացվելու հետազոտությունների արդյունքները, որոնք իրենց արտացոլումը կգտնեն ռազմավարական ծրագրերում:

Առողջության առաջնային պահպանման օղակի գործունեության որոշակի բարելավում ենք ակնկալում 2017թ-ին՝ կապված ՀՀ ԱՆ նոր հայեցակարգերի մշակման հետ:

Ավարտելով իր զեկույցը, Լ.Վանցյանը նշեց, որ առաջարկները և առկա խնդիրների լուծման ուղիները 2016թ-ի նոյեմբերի 29-ին ներկայացվել են ԱՆ:

